

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐՔԱՌԻՄՆԵՐ

Ս. Ռ. Հ. Պապոյան

ՊԱՅՄԱՆԻ ԿԱՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՂԶՎԱԾ
ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ ստորադասական նախադասության մեջ զեղչված շաղկապով կապակցություն արտահայտության տակ պետք է հասկանալ աշխարհի կապակցություն, որն իրացվում է ոչ թե շաղկապով (վերջինս բացակայում է), այլ ձևարանական-շարահյուսական տրիշ օժանդակ միջոցներով: Այս տեսակետից զեղչված շաղկապով կապակցությունը զգալիորեն առնչվում է անշաղկապ կապակցությանը, սակայն չի նույնանում նրա հետ: Զեղչված շաղկապով և անշաղկապ կապակցությունների տարբերիչ առանձնահատկություններից մեկը, գուցե գլխավորը, կայանում է նրանում, որ առաջինում պոստնցիալ կերպով առկա է շաղկապը վերականգնելու ներքին հնարավորությունը, մինչդեռ անշաղկապ կապակցությունը այդպիսի հնարավորություն չի բնութագրում:

Այստեղ մենք կփորձենք համառոտակի շարադրել պայմանի հարաբերություն արտահայտող երկրորդական նախադասությունների զեղչված շաղկապով կապակցության միջոցներն ու նշանակները արդի հայերենում:

Ժամանակակից հայերենի զեղչված շաղկապով բարդ նախադասությունների մեջ զգալի մաս են կազմում պայմանի հարաբերություն արտահայտող կախյալ նախադասությունները: Զեղչված շաղկապով պայմանի երկրորդական նախադասությունները աչքի են ընկնում կապակցական միջոցների բազմազանությամբ և դրանց հետ կապված նյութական-վերարարական իմաստների հարստությամբ:

Պայմանի երկրորդական նախադասությունների շարահյուսական դերը կայանում է նրանում, որ դրանց միջոցով բացահայտվում է այն նախապայմանը կամ ենթադրվող այն իմաստը, որի առկայության դեպքում միայն կարող է կատարվել կամ կատարման ենթակա է գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողությունը կամ եղելությունը: Իսկ գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողությունը, այսպիսով, հանդիսանում է կախյալ նախադասության գործողության կամ նրա այս կամ այն հատկանիշի առկայության հետևանքը կամ հետևությունը:

Գլխավոր ու կախյալ նախադասությունների իմաստային այս փոխհարաբերության և կապակցական միջոցների յուրահատկության շնորհիվ պայմանի երկրորդական նախադասությունները գրեթե օրինաչափորեն դրվում են առաջադաս դիրքով: Այլ խոսքով՝ նախ նշվում է որևէ գործողության կամ եղելության համար անհրաժեշտ պայմանը (որը, ինչպես նշվեց, կամ գործողություն է, կամ գործողության որևէ հատկանիշի առկայություն), և ապա՝ բուն գործողությունը:

Պայմանի հարաբերություն արտահայտող զեղչված շաղկապով բարդ նախադասությունների ընդհանուր հատկանիշներից մեկն այն է, որ գլխավոր նախադասության մեջ սովորաբար բացակայում են այնպիսի հարաբերականներ, ինչպիսիք են ապա, այն դեպքում, այն ժամանակ և այլն, որոնց կիրառությունը սովորական երևույթ է շաղկապով կապակցված նախադասություններում:

Այժմ փորձենք բնենլ պայմանի երանգ շունցող կախյալ նախադասությունների կապակցության բերականական հիմնական դրսևորումները և ցույց տալ, թե ինչ միջոցներով է իրացվում կապակցությունը, երբ բացակայում են շաղկապները:

1) Պայմանի հարաբերություն արտահայտող բարդ նախադասությունների զեղչված շաղկապով կապակցությունների մեջ ամենից հաճախ հանդիպում են այնպիսի կախյալ նախադասություններ, որոնց ստորոգյալը դրված է բայի ըղձական եղանակով՝ իր նրկու ժամանակեն-

րով: Սակայն միայն ըղձական եղանակով դրվիլով, բայ-ստորոգյալը ինքնին կախյալ նախադասությանը չի տալիս պայմանի բնույթ, ինչպես կարծում են բերականները¹, Կախյալ նախադասությանը պայմանի բնույթ են հաղորդում ոչ միայն ըղձականով դրված բայ-ստորոգյալը, այլև բերականական ոչ պական կարևոր այնպիսի գործոններ, ինչպիսիք են, դիցուք, գլխավոր նախադասության ստորոգյալ կաղմող բայի եղանակա-ժամանակային կիրառությունները, շարադասությունը, ինտոնացիան և այլն: Հատկանշական է, որ ըղձականով ստորոգյալ ունեցող կախյալ նախադասությանը հաճախ հաջորդում է շարահյուսորեն այնպիսի գլխավոր նախադասություն, որի մեջ գրանցվում է խոսողի հաստատական կամ ժխտական կտրական վերաբերմունքը տվյալ գործողության կատարման կամ չկատարման հանդեպ, իհարկե, կախյալ նախադասության մեջ նշված պայմանի առկայության դեպքում: Օրինակ՝ «Տաս՝ կուտի, չտաս՝ չի ուտի» (ՄՄՇԲ, 131): Այստեղ ընդգծված հատվածները պայմանի երկրորդական նախադասություններ են և բացահայտում են այն պայմանը, որոնց առկայությամբ՝ սուբյեկտի կամային կտրական վերաբերմունքի տեսակետից համապատասխան գործողությունը ենթակա է կատարման («կուտի») կամ ենթակա չէ կատարման («չի ուտի»): Կամային այդ կտրական վերաբերմունքը, ինչպես հայտնի է, հաճախ արտահայտվում է բայի պայմանական կամ ենթադրական եղանակով: Այսպես կազմվում են պայմանի հարաբերությունն արտահայտող ընդլված շաղկապով նախադասությունները: Նկատելի է, որ եթե կամ քե՝ թևության երանգ տվող շաղկապների բացակայությունը ամենևին չի սզդում պայմանի կախյալ նախադասության բնույթի վրա և չի փոխում նրա հարաբերությունը գլխավորի նկատմամբ:

Բերենք մի քանի օրինակներ.

«Ես չո պստիկ չեմ, մի տարի էլ անցնի, բեղերս դուրս կգան» (ԲՄ, 174): «Ենձ հարցընես, ես կանեմ մեա» (ՄԵ, 5, 114):

«Մեկը մեր գյուղում մի թիզ հող ունի,

Թրևս մի ծերից, մյուս ծերը կրնկի...» (ՀԹԵ, 2, 39)⁴,

«Հորում լինեմ ֆոստուն ցառ խոր,

Թե շաղացի ֆարի տակին,

Կենեն ձեր դեմ, ինչպես էսօր

Սասմա Դավիթ, Թուր-կեծակին» (Հ. Թումանյան, Սասունցի Դավիթ):

«Փռնես անկեղծ լինել, կտեսնես՝ առկից ինչ հոտած ձկներ են դուրս գալիս» (ՇԲ, 215):

«Վրայից բեռ բեկնի՝ կշարունակի գնալ, տե՛րն բեկնի, դարձյալ կշարունակի» (ՍԳ, 1962, 12, 77): «Ես լինեի նրա տեղը, նույնը կպատասխանեի» (ՆԴԵ, 3, 149): «Տեսած չլինեի, չի պնդի, բայց խի իմ աչքով տեսա...»: «Մոռվ չգար իրենց վրա, չէր սատկի, եվ ինչու են դալիս... Մի՞թե աւրիշ գործով չեն կարող վատապել իրենց հացը»² (ՍԽՄՄ, 389):

Վերջին երեք օրինակները նախորդներից առանձնանում են նրանով, որ նրանց կախյալ նախադասությունների ստորոգյալները դրված են ըղձական եղանակի ոչ թե ապառնի ժամանակով, ինչպես մյուսներում է, այլ՝ անցյալի ապառնիով: Նրանցում նախադասության կառուցվածքը և մասերի շարահյուսական հարաբերությունը թիկ չի փոխվել, սակայն փոխվել է նախադասությունների ներքին իմաստը գործողությունների կատարման կամ չկատարման տեսակետից: Եթե կախյալ և գլխավոր նախադասությունների ստորոգյալները համապատասխանաբար, դրվելով ըղձական և պայմանական եղանակների ապառնի ժամանակով, դրական խոնարհմամբ ցույց են տալիս պայմանի առկայությամբ հաստատապես կատարման ենթակա գործողություն, ապա նույն եղանակների անցյալի ապառնիի դրական խոնարհմամբ արտահայտված ստորոգյալները գրանցում են պայմանի առկայության և նրա հետևանքի ժխտումը, այ-

¹ Օրինակ, Պ. Պողոսյանի կարծիքով՝ «Երկրորդական նախադասության միջոցով պայմանի արտահայտումը ըղձական եղանակի ինչպես ապառնի, այնպես էլ անցյալի նիմանակն ֆունկցիաներից մեկն է» [տե՛ս նրա «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում» (Երևան, 1959) աշխատությունը, էջ 168—169, ընդգծումը մերն է՝ Ս. Պ.], իսկ առղատակի ծանոթագրության մեջ նշելով կերպով նշում է, որ «Պայմանի իմաստ խոսքին տալիս են նախադասության կառուցվածքը և ինտոնացիան»:

² Բուն բարդ ստորադասական նախադասությունից զուտ, օրինակների մեջ կրթման մեզ թույլ ենք տվել բերելու նաև կից նախադասությունները, էթե դրանք այս կամ այն չափով նպաստում են կախյալ նախադասության իմաստն ու հարաբերությունը առավել որոշակի դրսևորելուն:

սինքն՝ չի կատարվել պայմանը, հետևաբար չի իրագործվել հաստատական կատարման ենթակա գործողությունը։ Այլ խոսքով՝ հատկապես, ուշացած ակտիվների շարքում ենթադրյալ և նրա հետևանքի հանդեպ, թեև լինելի նրա տեղը, նույնը կատարասխանի նախադասության տրամաբանական իմաստն է, թեև չեմ եղել նրա տեղը և նույնը չեմ պատասխանել և ընդհակառակն՝ թեևս չեմ չլինելի, չլի պնդի...» նախադասության իմաստն է՝ թեևս եմ, ուստի պնդում եմ»։

Նշելի է, որ հաճախ, գեղարվեստական գրականության լեզվում հանդիպում են բնության ենթակա նախադասությունների կառուցվածքն հիշեցնող այնպիսի օրինակներ, որոնց մեջ կախյալ կամ գլխավոր նախադասությունների բայ-ստորոգյալները կիրառված են այլ եղանակներով, սակայն համապատասխանաբար պահպանում են ըղձականի կամ պայմանականի իմաստը։

Եթե կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հերիաթ չկա,

նարեկաժու, Քուշակի պես լուսապսակ ճակատ չկա.

Ախարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա,

Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում» (ԵԶԷ, 157)։

Իժմար չէ նկատել, որ պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը, որ դրված է հրամայական եղանակով, ամենևին հրաման չի պարունակում իր մեջ, այլ նախադասության կառուցվածքին համապատասխան արտահայտում է պայման, ունի՝ «եթե աշխարհ անցնես...» իմաստը. ինչպես նաև գլխավոր նախադասության ստորոգյալը (աշխարհ) ավելի շատ ունի պայմանական ապառնի (աշխարհի կամ սչես գտնիք), քան բուն սահմանական ներկայի իմաստը, որով տվյալ դեպքում կիրառվել է հեղինակի կողմից։ Բերենք ևս մեկ օրինակ. «Ամանը վայր ընկավ, կոտրվեց, և հազար կոծկիր, այլևս չես կարող ամբողջացնել» (ՆԴԵ, 3, 142). ուզում է ասել՝ «եթե հազար էլ կոծկես, այլևս չես կարող ամբողջացնել»։

Ահա երկու օրինակ, որոնց մեջ կախյալ նախադասությունների բայ-ստորոգյալները կիրառված են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով, սակայն ունեն ըղձական ապառնի իմաստ, այսինքն արտահայտում են այն թե խոսելու պահից առաջ ռեալ կերպով կատարված-ավարտված գործողություն, այլ մեկ ուրիշ գործողություն կամ եղելություն կատարելու (կամ չկատարելու) ժխտական խոնարհման դեպքում) պայման։

«Ի՞նչ գիտես Դրոյին։ Այո։ Ո՞վ գիտես։

Կարող է սարքել հազար դավ...»

Չուզեց խաբուրվ անի—կանի զոռով» (ԵԶԷ, 407)։

«Չուզեցին մարդեր տալ կամավ, կտան ակամա,—ասաց նա—Այո՛, մարդերը այժմ կգան նոցա կամքին հակառակ...» (ՍԶԶ, 266) և այլն։

Բերված նախադասությունների հնարավոր տարբերակները, որոնք արտահայտում են նույն պայմանի հարաբերությունը, հետևյալն են. «Եթե չուզի խաբուրվ անել, կանի զոռով» և «Եթե չուզեն մարդեր տալ կամավ, կտան ակամա»։ Դժվար չէ նկատել, որ շաղկապավոր կապակցությունների մեջ թեև պահպանված է պայմանի հարաբերությունը, սակայն դրա փոխարեն բացակայում են նախկին լժոցիոնալ և վերաբերական իմաստները։

Հետևյալ երկու ստորադաս նախադասություններում ստորոգյալները արտահայտված են պայմանական եղանակով և իրենց բայ-եղանակի համապատասխան էլ նախադասությանը տվել և պայմանի լրացական բնույթ։

«Կվանեն՝ս քշումուն՝ կապրես, չն՝ս վանի, կկորչես անհետ» (ՍԽՄՍ, 748), «Սպասենք... Պայմանը հաշտության կլինի ընդունելի՝ կրեղուններ, կլինի մեծելի՝ կմեծենանք...» (ՍԶԶ, 452)։

3 Ըղձականի իմաստով այլ եղանակների հարաբերական կիրառությունների մասին մանրամասն տե՛ս Պ. Պ ո ղ ո ս յ ա ն, հիշված աշխ. էջ 137 և հջ., որից և քաղել ենք հիշյալ երկու օրինակները։ Նկատելի է, որ այս երկու օրինակները, ի տարբերություն զուգահեռաբար քննվող նախադասությունների, կազմում են ոչ թե զեղչված, այլ անշաղկապ կապակցությամբ բարդ նախադասություններ, բանի որ հնարավորություն չեն ընձեռում կախյալ նախադասությունը գլխավորի հետ հարաբերելու ստորադասական շաղկապով, հակառակ դեպքում հարկ կլիներ փոխել կախյալ նախադասության բայ-ստորոգյալի եղանակա-ժամանակային կիրառությունը (այսպես՝ «եթե աշխարհ անցնես...» և «եթե հազար կոծկես...» և այլն, ինչպես նշվեց վերը)։

Պայմանի հարաբերությունն արտահայտող նման կախյալ նախադասությունների կապակցությունը գլխավորի հետ, շաղկապական բառերի բացակայության դեպքում, այսպիսով ուղղակիորեն պայմանավորվում է երկրորդական և գլխավոր նախադասությունների բայ-ստորոգյալների եղանակա-ժամանակային որոշակի կիրառությամբ: Երկու համապատասխան նախադասությունների միջև առկա է նաև որոշ շարահյուսական դադար, որը իր հերթին նպաստում է կապակցությունը:

Այստեղ խոսելով բայերի եղանակա-ժամանակային կիրառությունների կապակցական դերի մասին, չենք կարող գոհունակությամբ չնչել, որ շուրջ մեկ հարյուրամյակ մեզանից առաջ, աշխարհաբարի գիտական բերականության հիմնադիրներից մեկը՝ Արսեն Այտընյանը նույնպես նկատել է, որ երբեմն առանց շաղկապների, միայն բայերի եղանակային ձևերով անդամակարելի է ստեղծել այս կամ այն հարաբերությունն արտահայտող կախյալ նախադասություններ: «Պարզ ստորադասական (իմա ըզձական—Ա. Պ.) ժամանակ մը,—գրում է նա,—բավական կըլլա երբեմն թեական նախադասություն կազմելու՝ առանց երև, երբ, և՛ ավելացնելու, զորօրինակ, Տեսնեն, որ մեռնելու վրա է, կթողուն կերթան: Մեռնելիս իմանամ, զքեզ չեմ լիաներ: Թշնամվույդ տունը այլված լսեիր, կուրախանայի՞ր, արդյոքս»: Երան պետք է ավելացնել, որ մեծ բերականագետի բերած օրինակների մեջ ոչ միայն կախյալ նախադասությունների բայ-ստորոգյալի եղանակներն են համապատասխանում մեր բնությունը ենթակա երկրորդական նախադասությունների ստորոգյալներին, այլև բարդ-նախադասությունների ամբողջական կառուցվածքը, շարահյուսությունը, մի բան, որ վկայում է, թե քննության ենթակա նախադասությունները իրենց շարահյուսական կառուցվածքով նոր երևվույթ չեն արդի հայերենում և իրենց ակունքներն ունեն դեռևս աշխարհաբարի կազմավորման շրջանում, անցյալ դարի 50—60-ական թվականներին: Ինչ վերաբերում է ժամանակակից հայերենին, ապա այսօր նման կապակցությունները զեղչված շաղկապով առավել շարժված են քանավոր խոսակցական և գեղարվեստական, քան թե գիտական-հրապարակախոսական լեզվում:

2) Պայմանի հարաբերությունն կարող են արտահայտել այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնց ստորոգյալը, ինչպես տեսանք, արտահայտված է բայի ըզձական եղանակով: Սակայն սա նշանակում է արդյոք, թե ըզձականին է միայն հատուկ պայման դրուողը: Պայմանի երկրորդական նախադասությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանի դրսևորման համար հայերենը դարերի ընթացքում մշակել է բազմաթիվ միջոցներ և միշտ չէ, որ անհրաժեշտ է կախյալ նախադասությունը սկսել քե, երև և նման թեական շաղկապներով:

Ժամանակակից հայերենում մեծ կշիռ են կազմում պայման արտահայտող նաև այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնց ստորոգյալը կիրառված է բայի սահմանական եղանակով և հատկապես սահմանականի ներկայով: Ինչ վերաբերում է գլխավոր նախադասությանը, ապա սրա ստորոգյալ կազմող բայի եղանակա-ժամանակային կիրառությունը այնքան էլ ազատ չէ: Առաջիմ քննելու այնպիսի բարդ նախադասություններ, որոնց գլխավոր նախադասության ստորոգյալը գրված է բայի հրամայական եղանակով, կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը գրվում է բայի հրամայական եղանակով, իսկ կախյալ նախադասության ստորոգյալը՝ սահմանական ներկայով: Օրինակ՝ «—Քա՛նկ և՛ ծախում, մի առե (ԲՀՄԶ, 30): Բարդ նախադասության ընդգծված հատվածը ցույց է տալիս այն պայմանը, որից ելնելով սուբյեկտը իր կամային վերաբերմունքն է արտահայտում խոսակցի նկատմամբ, թեև գլխավոր նախադասության հրամայական բայը կիրառված է իր սովորական իմաստով, ապա երկրորդական նախադասության սահմանական ներկայով գրված բայ-ստորոգյալը ունի հարաբերական կիրառություն: Այն չի արտահայտում խոսքի մոմենտին օբյեկտիվորեն կատարվող (կամ չկատարվող՝ ժխտական խոնարհում) ստույգ գործողություն կամ եղելություն, այլ մատնանշում է ընդհանուր կամ ենթակային ընդհանրապես հատուկ այնպիսի մի գործողություն կամ հարցում այնպիսի գործողության մասին, որը

ա) Բարդ նախադասության համապատասխան, մասերի մեջ պայմանի հարաբերությունն կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը գրվում է բայի հրամայական եղանակով, իսկ կախյալ նախադասության ստորոգյալը՝ սահմանական ներկայով: Օրինակ՝ «—Քա՛նկ և՛ ծախում, մի առե (ԲՀՄԶ, 30): Բարդ նախադասության ընդգծված հատվածը ցույց է տալիս այն պայմանը, որից ելնելով սուբյեկտը իր կամային վերաբերմունքն է արտահայտում խոսակցի նկատմամբ, թեև գլխավոր նախադասության հրամայական բայը կիրառված է իր սովորական իմաստով, ապա երկրորդական նախադասության սահմանական ներկայով գրված բայ-ստորոգյալը ունի հարաբերական կիրառություն: Այն չի արտահայտում խոսքի մոմենտին օբյեկտիվորեն կատարվող (կամ չկատարվող՝ ժխտական խոնարհում) ստույգ գործողություն կամ եղելություն, այլ մատնանշում է ընդհանուր կամ ենթակային ընդհանրապես հատուկ այնպիսի մի գործողություն կամ հարցում այնպիսի գործողության մասին, որը

4 Ա. Այտընյան, Քննական բերականությունն աշխարհաբարում կամ արդի հայերենի լեզվի, հանդերձ ներածությամբ և հավելվածով, Վիեննա, 1866, «Նախաշավիղ», էջ 211, Ընդգծումները մերն են—Ա. Պ.:

ստորակետի համար դառնում է նախադասման, որպիսով նա իր խոսակցին կատարել (կամ չկատարել) տա որևէ այլ գործողություն կամ եղելություն, Բերենք ևս մի քանի օրինակ.

«— Իհ, բավական է, ի սեր աստծո, այստեղ ժամ չես շինելու, Բարո՞ղ ունիս, գնա քո «եղբայրներիդ» քարոզիր» (ՄԵ, 5, 26): «— Ուրեմն, պատրաստությունդ տեսն՞ել ես:— Արդեն: Կամենո՞ւմ ես, արի՛ ցույց տո՞ւմ» (Ե. տ., 31): «Կամենո՞ւմ ես ինձ մխրթա՞նել, ցույց տուր, թե որ ճանապարհով կարող եմ ես ավելի լավ վրեժխեղիր լինել իմ թշնամուն և քո թագավո՞րին» (ՍԳՄ, 422):

«Ուզում ես անուց, որ հասնի երկիրք,

Խոսիր բարձրաձայն, հանիր մեծ աղմուկ» (ԱՄԵ, 302):

«— Ունես, աշխատիր կրկնապատկել, եռապատկել, տասնապատկել» (ՇՔ, 134):

«Կուգես—հրեն, գրեա հանիր» (ՀԹԵ, 2, 116) և այլն:

Նկատելի է, որ վերջին օրինակում կախյալ նախադասության ստորոգյալը թեև դրված է պայմանական եղանակով, բայց նա նույն իմաստով է կիրառված, ինչ որ զուգահեռ նախադասություններում սահմանական ներկայն:

Հետևյալ երկու օրինակներում երկրորդական նախադասությունների ստորոգյալները անվանական են, սակայն քանի որ այս դեպքում հանգույցն է դրված սահմանական ներկայով, ապա նախադասությունների ընդհանուր շարահյուսական կառուցվածքը մնում է նույնը:

«Քոնը Բիչ և, խլիր հարևանիցդ, ընկերիցդ, Եղբորիցդ» (ՇՔ, 134):

«Սպարապետ ես՝ ճարը գտիր...» (ՍԽՄՍ, 468): «Տղամա՛րդ և, թող կովով առնի իր ուզածը» (Ե. տ., 100):

«Պոկետ ես, դու այսօր պիտի մաքառես—

Եվ չի օգնի այստեղ քեզ գնդացիրը» (ԵԶԸԵ, 80) և այլն:

Ինչպես նշվեց վերը, քննվող կառուցվածքի նախադասությունների մեջ կախյալ նախադասության ստորոգյալը սովորաբար դրվում է սահմանական ներկայով, սակայն չի բացառվում սահմանականի այլ ժամանակների կիրառությունը զիջված շաղկապով կապակցության մեջ:

Այսպես, պայման կարող է արտահայտվել այնպիսի երկրորդական նախադասության մեջ, որտեղ ստորոգյալը բայի սահմանական եղանակի վաղակատարով է դրված, իսկ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը հրամայական եղանակով, այսինքն բարդ նախադասության կառուցվածքը նույնն է, միայն տարբեր է կախյալ նախադասության բայ-ստորոգյալի ժամանակային կիրառությունը. օրինակ.

«Ասե՛լ ես, խո՞ւս ես տվել, խոսքիդ տեր եղիր»: «Խոստացե՛լ ես, կատարիր խոստումդ»:

«Խո՞ւս ես տվել՝ վախտի՛ն կարի,

Թէ՛ չէ ասա՛՜ վաղը արի» (Հ. Թում., Շունն ու կատուն):

«Ով կեցել եր, զե՛նք կապեցեր,

Չե՛նք եր կապել, ձի՛ թամբեցեր,

Չի՛ եք թամբել,

Ելեր հեծեք» (ՀԹԵ, 2, 118) և այլն:

Ընդգծված կախյալ նախադասություններում բայ-ստորոգյալները արտահայտում են պայման, որն ավելի է ընդգծվում գլխավոր նախադասության ստորոգյալների՝ հրամայական եղանակով: Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմից քաղված օրինակում ևս ընդգծված հատվածները նշում են գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողության պայմանը, թեև նրանք արտարուստ մոտենում են ենթակա երկրորդական նախադասություններին: Հիրավի, նույն բարդ նախադասության առաջին հատվածում կախյալը ենթակայական նախադասություն է՝ «Ով կեցել եր, զենք կապեցեր», այսինքն «Թող զենք կապի նա ով կեցել է» (հազնվել է): Սա ենթակա է դառնել, որովհետև կա «ով» հարաբերականը, թեև պետք է ասել, որ ժամանակակից հայերենի լեզվամտածողությանը խորթ է «ով» դերանվան՝ երկրորդ դեմքի հետ համաձայնվելը. պետք է լիներ՝ «ով կեցել է» (ինչպես մեր փոխված օրինակում): Իսկ սրան հաջորդող երկու նախադասություններում, մեր կարծիքով, ավելի գերակշռում է պայմանի հարաբերությունը, քան ենթակայական, քանի որ, նախ՝ բացակայում է անսովոր բակառությունը (սով-ը), երկրորդ՝ հենց դրա շնորհիվ ստեղծվում է երև կամ րև պայմանի շաղկապների միջոցով երկրորդական նախադասությունը կապակցելու ներքին հնարավորություն. մի քան, որը հաճախ ծառայում է իբրև օժանդակ միջոց բացահայտելու այս կամ այն կախյալ նախադասության շարահյուսական ֆունկցիան:

Նախքան այս ենթամիջոցի նախադասությունների կառուցվածքի քննությունն ավարտելը,

հարև են համարում նշել, որ շատ հին ժամանակներից հայոց լեզվում, ինչպես և աշխարհի շատ ուրիշ լեզուներում, ստեղծվել է ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ, կրոնական ծագում ունեցող մի արտահայտություն, որը հետագայում կորցրել է կրոնական բովանդակությունը և վերածվել դարձվածաբանական միավորի: Դա «Աստված սիրես» արտահայտությունն է, որ հաճախ անշահակապ կապակցությամբ բարդ ստորադասական նախադասության կազմում կատարում է պայմանի երկրորդական նախադասության ֆունկցիա:

Սակայն ի տարբերություն նույն կառուցվածքն ունեցող այլ նախադասությունների, դարձվածքի արժեք ստացած այս կախյալ նախադասությամբ, պայմանի հետ միասին, արտահայտվում է նաև սուբյեկտի հորդորանքի, աղերսանքի վերաբերությունը գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողության կամ եղելության կատարման (կամ չկատարման) վերաբերյալ, թեև այս գործողությունն ու եղելությունը դրսևորված են լինում բայի հրամայական եղանակով. օրինակ,

«էհ, աստված սիրես, թող դրանց, պապի...» (ՀԹԵ, 2, 36):

«Աստված կսիրես, դիր ուրիշ բանի,

Թե չէ էս խալխին լեղաճաք կանի» (Ն. տ., 101):

Նույնի նմանությամբ նաև՝ «Հեռակլեսը սիրես, աշխատիր միայն հանգիստ լինել...» (ՀՄՅԵ, 176) և այլն:

Բերված օրինակների մեջ ընդգծված հատվածները կատարում են պայմանի պարագա երկրորդական նախադասության շարահյուսական դերը և բովանդակությամբ համապատասխանում են երե շաղկապով կապակցված նույնատիպ նախադասություններին, ինչպես՝ «Երե (կամ՝ քե) աստված (աստծուն) սիրում ես, թող դրանց պապի...» և այլն:

Ինչպես երևում է այս տարբերակից, երե (քե) շաղկապով կապակցվելու դեպքում կախյալ նախադասության՝ ըզձական կամ պայմանական եղանակով դրված ստորոգյալը փոխվում է սահմանական ներկայի, բանի որ այն վերը նշված եղանակներով կիրառվելիս ունի սահմանականի ներբերանգներից մեկը, որը ցույց է տալիս ոչ թե մասնավոր, այլ ընդհանրապես կատարվող գործողություն, յոն իբրև ունակություն՝ ենթակայի ներքին հատկությունն է: Ձմռանանք, որ մեր կոնկրետ դեպքի համար (սեթն աստծուն սիրում ես) հիշյալ իմաստները հատուկ էին պատմական անցյալում, այսօր, ինչպես նշվեց, այն ստացել է միայն դարձվածքի արժեք, և նախադասության մեջ եղանակավորման դերից զատ ուրիշ դիր չունի: Եվ եթե այժմ նման նախադասությունները մենք բարդ ենք համարում, ապա դա ունի պայմանական իմաստ և նկատի ունի նրա ծագումաբանական-կառուցվածքային հատկանիշները:

բ) Հաճախ բարդ ստորադասական նախադասության մեջ կախյալ և գլխավոր նախադասությունների ստորոգյալները կազմված կարող են լինել միևնույն բայից՝ տարբեր եղանակա-ժամանակային կիրառությամբ. Ընդ որում երկրորդական նախադասության ստորոգյալը սովորաբար դրվում է բայի սահմանական եղանակի ներկա, բիշ դեպքերում նաև այլ ժամանակներով: Օրինակ՝

«Ձեռ ուզում, մի՛ տոգիր, քո գործն է»: «Ձի սովորում, թող շտվորի, իրեն է վնասում» և այլն:

Ձևաղված շաղկապով երկրորդական նախադասությունների ստորոգյալները այստեղ արտահայտված են բայի սահմանական եղանակի ներկայով, ոսկայն ինչպես նախորդ դեպքերում, ունեն հարաբերական իմաստ և նախադասությանը առավել պայմանի երանգ, զեղված շաղկապով կապակցության դեպքում որոշակի կերպով դրսևորում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը կատարվող կամ կատարվելիք (անցյալում կամ ապագայում) գործողության նկատմամբ: Այսպիսի կառուցվածքի նախադասությունների յուրահատկություններից մեկն էլ այն է, որ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի եղանակա-ժամանակային կիրառությունը ուղղակիորեն առնչվում է կախյալ նախադասության ստորոգյալի դեմքին: Եթե վերջինս երկրորդ դեմքի է (եզակի կամ հոգնակի), ապա գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է բայի հրամայական եղանակով (կախյալ նախադասության ստորոգյալի թվին համապատասխան ստանալով եզակի կամ հոգնակի թիվ, բանի որ ենթական և՛ կախյալ, և՛ գլխավոր նախադասություններում նույնն է). եթե կախյալ նախադասության ստորոգյալը (յուրեմն և ենթական) երրորդ դեմքի է, ապա գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը կիրառվում է ըզձական եղանակով, երբեմն՝ սկզբից ստանալով լրող եղանակավորող բառը: Նշելի է, որ գլխավոր նախադասության մեջ ստորոգյալ կազմող թե՛ ըզձականը (թող-ով կամ առանց թող-ի), թե՛ հրամայականը նույնպես ունեն հարաբերական

իմաստ և շեն արտահայտում հրաման կամ հրամանին մոտ հորդոր, ցանկություն և այլն, չունեն նաև հրամանի շեշտադրություն և ինտոնացիա: Ընդհակառակն, նրանց միջոցով արողակի կերպով դրսևորվում է լուսնոգի անբավականությունը, դժգոհությունը, անհամաձայնությունը, թեև հակառակ իր այդ անբավականության, դժգոհության. նա առաջարկում է, թույլ է տալիս այդ անելու: Բերենք դարձյալ մի քանի օրինակ.

«Խլում են, թող խեն, ի՞նչ ես դարձ անում» (ՂԱԸԵ, 465):

«Թագավորն է քո թշնամին,

կրոնի՜վ ունես, իր հետ առա,

Հե՛ր ես բաշում թուր կնծակին

էս անճարակ խալխի վրա» (ՀԹԵ, 2, 120):

«Հյո՛ւր է գալու, թող գա ու գնա, պրծանք գնաց» (ՆԴԵ, 2, 27): «Ձե՛ն ուզում, թող չուզեն, գլուխները քարը...» (ՍԽՄՍ, 340) և այլն:

Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, հիշյալ սուբյեկտիվ վերաբերական-զգացական իմաստները առավել հաջող դրսևորվում են միայն այնպիսի կառուցվածքի նախադասություններում, որտեղ շաղկապի հետ միասին բացակայում է նաև ենթական, որի մասին խոսվել է նախորդ նախադասություններում: Եթե փորձենք կազմել դրանց տարբերակները, ավելացնելով սպասելի շաղկապը և ենթակաները, կտեսնենք, որ սուբյեկտիվ վերաբերական նախկին՝ երանգները այնպես ցայտուն չեն դրսևորվում, ինչպես զեղչված շաղկապով ու զեղչված ենթականերով նախադասությունների մեջ: Օրինակ.

«Նքև ընկերները ուրիշ նամփով են գնում, թող գնան: Միայն թե շնչվեն ընդհանուր նպատակից»:

Ընդգծվածը որոշակի պայման է արտահայտում, բայց գրեթե անորոշ է սուբյեկտիվ վերաբերական ենթատեքստային այն իմաստը, որն այնքան շոշափելի զգացվում է զեղչված ենթականով ու շաղկապով նախադասության մեջ, ինչպես՝ «Ուրիշ նամփով են գնում, թող գնան», այսինքն՝ «Եթե գնում են, թող գնան, բայց ավելի լավ կլինի՝ եթե չգնան» և այլն:

3) Շարահյուսական որոշ հետադարձություն հն ներկայացնում զեղչված շաղկապով այնպիսի բարդ ստորադասական նախադասություններ, որոնց թե՛ կախյալ և թե՛ գլխավոր նախադասությունների ստորոգյալները արտահայտված են բայի սահմանական եղանակի ներկայով: Սակայն և՛ գլխավոր, և՛ կախյալ նախադասությունների ստորոգյալները չունեն սահմանական ներկային հատուկ տվորական իմաստ: Նման կառուցվածքի նախադասությունների տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ նրանց միջոցով արտահայտվում է ոչ թե խոսքի մոմենտին օբյեկտիվորեն կատարվող ստույգ գործողություն, եղելություն, այլ ընդհանուր վերացական այնպիսի գործողություն կամ եղելություն, որը առհասարակ հատուկ է տվյալ առարկային, իբրև նրա հիմնական, տվյալ պահին գլխավոր հատկանիշի: Որոշ իմաստով հիշյալ ներկան մոտենում է սահմանականի, այսպես ասած, պատմական ներկային: Մեր միտքը ավելի շոշափելի դարձնելու համար՝ բերենք մի քանի օրինակ.

«Հուրն ես բռնում, որդին ա գլուխը մահի տալիս, կրակն ես գցում, էլի իր հավատն ա պաշտում» (Ըստ ԱԱՔ-ի, 214): «Օգնում ես՝ շնորհակալ լինելու փոխարեն, ասում են՝ պարտավոր ես, շեւ օգնում՝ երես են թեքում և թշնամուդ առաջ խունկ ծխում: Ինչպե՞ս վարվես նրանց հետ, որ լավ լինի»: «Հարվածում ես՝ բողբոջում են, դրվատում ես, բողբոջում են: Զգիտես ինչպես գրել» (ՆԶՀ, 279) և այլն:

Նկատելի է, որ թեև բերված բարդ նախադասությունների մեջ ընդգծված կախյալ նախադասությունները դրսևորում են պայմանի հարաբերություն, սակայն նրանց բայ-ստորոգյալները չեն նշում խոսքի պահին ունալ կատարվող գործողություն, այլ ցույց են տալիս, որ եթե երբևէ տվյալ առարկան կատարում է նման որևէ գործողություն, ապա դրան պարտադիր կերպով, իբրև օրենք դարձած սովորություն, հաջորդում է մեկ այլ գործողություն կամ եղելություն (շարահյուսորեն վերջինս արտահայտվում է գլխավոր նախադասության մեջ): Պատահական չէ, որ կախյալ նախադասության ստորոգյալը նման կառուցվածքի բարդ նախադասություններում սովորաբար կիրառվում է բայի ներկորդ դեմքով, որը ամենևին էլ ներկորդ դեմքի գործողություն չի ցույց տալիս: Սակայն դրանով նա զգալիորեն մոտենում է ժողովրդի՝ դարավոր կենսական փորձն ընդհանրացնող առածներին ու դարձվածքներին, որոնք

կազմված լինելով երկրորդ դեմքով, բերականագիտության մեջ համարվում են նույնիսկ անենթակա նախադասություններ, Ասանց ծայրահեղության մեջ ընկնելու, անենթակա կարելի է համարել նաև պայմանի երկրորդական նախադասությունները՝ մեր բերած օրինակներում, որտեղ դու դերանվան, այսինքն, ենթակայի վերականգնման հնարավորությունը առկա է միայն ձևականորեն: Բանն այն է, որ կախյալ նախադասության՝ երկրորդ դեմքով դրված ստորոգյալը ամենևին չի վերաբերում ունալ խոսակցին, քանի որ ոչ վերջինս և ոչ էլ որևէ ունալ անձնավորություն չի հանդիսանում գործողություն կատարողը: Իսկ եթե ձևական հնարավորությունը դարձնենք իրական և, այնուամենայնիվ, վերականգնենք ենթական, ապա կփոխվի ամբողջ նախադասության իմաստը և պայմանի երկրորդական նախադասությունը կստանա այսպես ասած մասնավոր առարկայական բովանդակություն, այսինքն կկոնկրետանա երկրորդ դեմքով արտահայտված բայ-ստորոգյալի գործողությունը: Բացի դրանից, կխախտվի նաև բարդ նախադասության մասերի հարաբերությունը, որը կարող է առաջացնել նաև ընդհանուր իմաստի շփոթություն: Օրինակ՝ «Դու հարվածում ես, և նրանք բողբոջում են...» կամ «Եթե գուհարվածում ես, նրանք բողբոջում են...»: Դժվար չէ նկատել, որ այս տարբերակներից ոչ մեկը ոչ բարդ նախադասության համադասական կառուցվածքը և ոչ էլ ստորադասական, չունեն նույն նախադասության զեղչված շաղկապով կառուցվածքի իմաստային և վերաբերական հատկանիշները:

Վերը քննված նախադասությունների կառուցվածքային տարրերիչ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նույն բարդ նախադասության մեջ, կարծես թե, կողք-կողքի գուգահեռաբար դրված են երկու նույնարժեք նախադասություններ, կազմված երկու պայմանի երկրորդական և երկու գլխավոր նախադասություններից: Ընդ որում երկու գուգահեռ պայմանի նախադասությունները արտահայտում են կամ հակադիր, իրար բացասող գործողություններ, կամ նույն գործողության կամ եղևության կատարվելը կամ չկատարվելը (դրական խոնարհում և ժխտական խոնարհում): Օրինակ՝

«Խոսում ես՝ վայ է, լռում ես՝ երկու վայ», «Բոլոր երևեսներն էլ այդպես են. շատ ես շոյում՝ երես են առնում, բմահաճ դառնում, շես շոյում՝ խռովկան են մեծանում. պետք է իմանալ՝ ինչպես սիրել» և այլն:

Զուգահեռաբար դրված պայմանի նախադասություններն են՝ «Խոսում ես»||«Լռում ես», «Շոյում ես»||«Չես շոյում»:

Ստորադասական կապակցությունը քննության ենթակա բարդ նախադասություններում պայմանավորված է ամբողջ նախադասության կառուցվածքով, որի մեջ դարձյալ փոքր բաժին չի ընկնում կախյալ և գլխավոր նախադասությունների ստորոգյալների եղանակա-ժամանակային կիրառություններին և նրանց հարաբերական իմաստին, որոնց մասին խոսվեց վերը: Կախյալ նախադասության հատուկ ինտոնացիան և շարահյուսական դադարը բարդ նախադասության համապատասխան հատվածների միջև իրենց հերթին նպաստում են կապակցության ավելի շոշափելի դարձնելուն:

4) Պայմանի երկրորդական նախադասությունների մի տեսակը պետք է համարել այսպես ասած՝ հակառակ պայմանի կամ պայմանի բացառման նախադասություններ, որոնք իրենց թե՛ կապակցական և թե՛ իմաստային վերաբերական շատ հասկանիչներով հիշեցնում են պայմանի կախյալ նախադասությունների համապատասխան կառուցվածքը: Հակառակ պայմանի երկրորդական նախադասությունների բովանդակությունը հանգում է հետևյալին. կախյալ նախադասությունն արտահայտում է այնպիսի գործողություն, որի առկայության դեպքում թվում է, թե պետք է կատարվեր մեկ այլ՝ սովորական գործողություն, սակայն ինչ-ինչ պատճառներով կամ ժխտվում է սովորական գործողությունը, կամ կատարվում է այլ գործողություն, որը չպետք է կատարվեր իրական: Վերջինս, այսինքն, գլխավոր նախադասության գործողությունը կատարվում կամ կատարվելու է՝ հակառակ կախյալ նախադասության մեջ նշված պայմանի, այլ խոսքով՝ գործողությունը կկատարվի երկու դեպքում էլ՝ առկա լինի տվյալ պայմանը, թե՛ դրան հակառակ պայմանը: Մեր միտքը պարզելու համար դիմենք օրինակներին:

«Վատ էլ ըլի. լավի տեղ անց կկենա» (Ա.Ք. 211): «Լեզու իմանալ էլ, նա պիտի լուրս (Ա.Ք. 70):

Զրդգծված նախադասությունները, որոնք շարահյուսորեն գլխավոր նախադասություններ են, ըստ էության այն հետևություններն են, որ ընդգծված պայմանի կախյալ նախադասությունից են բխում:

Վերին նախագասությունը ունի հետևյալ տրամաբանական իմաստը. «Լավը լավի տեղ անց է կենում, սակայն Երեւնում էլ լինի (կամ լավ չլինի)։ դարձյալ լավի տեղ անց կկենա» և այլն։

Վերը բերված օրինակներում գլխավոր նախագասությունների գործողությունները կատարվում են բնականորեն սլայմանների բացակայությամբ, կամ ավելի ճիշտ՝ հակառակ սլայմանի առկայությամբ։ Եվ պետք է կարծիք, թե նախագասության մեջ խախտվել են տրամաբանության օրենքները, թեև չի բացառվում նաև հակատրամաբանական որևէ մտքի՝ քերականորեն ճիշտ լինելը։ Ամբողջ հարցն այն է, որ վերը՝ գրականությունից բաղված օրինակներում կախյալ նախագասությունների մեջ ստորոգյալների կողքին առկա է էլ բառը եղանակավորող իմաստով, որի դերն այնքան էլ փոքր չէ գլխավոր և երկրորդական նախագասությունների միջև իմաստային հարաբերություններ ստեղծելու գործում։ Այդ էություն հակառակ պայմանի նախագասության ստորոգյալին կամ նրա որևէ հատկանիշին, այն ամբողջ կախյալ նախագասությանը տալիս է այսպես ասած՝ տանելիության, կարելիության կամ զիջման բովանդակություն։ Ուղղում է ասել՝ ձերն այսպես էլ (նույնիսկ այսպես) լինի, դարձյալ կկատարվի գործողությունը։ Նման նախագասությունների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ ինչպես պայմանի շատ այլ երկրորդական նախագասություններում, այստեղ ևս կախյալ նախագասության ստորոգյալը գրվում է բայի ըղձական եղանակով, իսկ գլխավոր նախագասության բայ-ստորոգյալն եղանակաժամանակային կիրառությունը սովորաբար աղատ է։

Ահա ևս մի քանի օրինակ.

«Հայրն էլ ծեծեր, գուրս չէին գնա» (ԱՍՔ, 202), «Տաճեկու շանքեր էլ ունենա, ավելի լավ է համաձայնվել ոչ-որի, քան թե դիմել ավելորդ ուսկի»։ «Աշտենց ընտանիքի հետ այնքան մոտ ենք, որ չհրավիրենք էլ՝ կգանա և այլն։

Կառուցվածքային տեսակետից որոշ հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ հատվածը, որի անշաղկապ կախյալ նախագասության ստորոգյալը արտահայտված է բայի հրամայական եղանակով, որը կիրառված է հարաբերական նշանակությամբ և ունի ըղձականի ու էլ եղանակավորող բառի վերը նշված միասնական իմաստը, որով հակառակ սլայմանի երանգ է հաղորդվում երկրորդական նախագասություններին.

«— Ես հայերենը չեմ թողնի,—ասաց Բաբիկը, տակից վեր նայելով համառ ու չար։

— Եկ այստեղ,— հրամայեց ցած ձայնով Վասակը։— Բաբիկը մոտեցավ։

— Խփիր... ես պարսիկներին չեմ ծառայի։— Վասակը ապտակեց։

— Սպանի բեկուգ, չեմ ծառայի» (ԴԴԿ, 37)։ Այսինքն՝ «Երե խփես էլ, երե սպանես էլ, ես պարսիկներին չեմ ծառայի»։

Ինչ վերաբերում է հիշյալ նախագասությունների ստորագասական կապակցության միջոցներին, ապա դրանք իրացվում են էլ եղանակավորող բառի, կախյալ նախագասության բայ-ստորոգյալի եղանակաժամանակային որոշակի կիրառության և ինտոնացիայի շնորհիվ։ Դադադասության մասին չենք խոսում, քանի որ սլայմանի հարաբերությունը դեպքով շաղկապով կախյալ նախագասությունները մեծաւ մասամբ առաջադաս են, թեև այս օրինաչափությունն էլ բարացած չէ և տեղ-տեղ կարող է խախտվել, ինչպես հետևյալ նախագասությունների մեջ.

«Հանգիստ լինեք խիղճս, արդար լինեին իմ գործերը, այն ժամանակ բեկուգ բոլոր աշխարհը կանգնեք իմ դեմ, ես չեմ ընկճվիլ. ոչ էլ հուսահատությունը կարող էր իմ հոգին հալթադարել» (ԼԳԼԳ, 309—310)։

Ընդգծված սլայմանի կախյալ նախագասությունը միջադաս է և ընկել է «...այն ժամանակ ես չեմ ընկճվիլ...» գլխավոր նախագասության մեջ։

Այսպիսով, ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ շաղկապավոր և զեղչված շաղկապով նախագասությունները շարահյուսական կապակցության երկու հակադիր և զուգահեռաբար գոյություն ունեցող ձևեր են, որոնք իրար կողքի կյանք ունեն լեզվի մեջ և չեն բացառում միկը մյուսին։ Ընդհանրապես, դրանց զուգահեռ գոյությունը հարստացնում է լեզվի շարահյուսական և ոճական հնարավորությունները, ավելի ճկուն ու արտահայտիչ դարձնում լեզուն։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

- ԱԱՔ—Ա. Այտրեյան, Քննական քերականություն, Վիեննա, 1906:
 ԱՔԸԵ—Ակսել Բակունց, Ընտիր երկեր, Երևան, 1955:
 ԱԾԵ—Ալ. Ծատուրյան, Երկեր, Երևան, 1948:
 ԲՀՍԶ—Բ. Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962:
 ԴԴՎ—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1954:
 ԵԶԸԵ—Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954:
 ՀԹԱ—Հ. Թումանյան, Անուշ:
 ՀԹԵ—Հ. Թումանյան, Երկեր, Երկհատորյակ, Երևան, 1958:
 Հ. Հովհ. Ե.—Հ. Հովհաննիսյան, Երկեր, Երևան, 1961:
 ՀՍՅԵ—Հենրիկ Սենկևիչ, Յո երթաս, Երևան, 1961:
 ՂԱԸԵ—Ղազարոս Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1956:
 ՄԳՄ—Մուրացան, Գեորգ Մարգարիտունի, Երկեր, հ. 3, Երևան, 1952:
 ՄԵ—Մուրացան, Երկեր, հ. հ. 4—5, Երևան, 1953:
 ՄՄՇԲ—Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962:
 ՆԴԵ—Նար-Դոս, Երկեր, Երևան:
 ՆԶՀ—Ն. Ջարյան, Հացավան, Երևան, 1949:
 ՇԵԼԺ—Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու:
 ՇԲ—Շիրվանզադե, Քառու, Երևան, 1934:
 ՍԳ—Սովետական գրականություն, ամսագիր, 1962 թ. համարները:
 ՍԶԵ—Ստ. Ջորյան, Երկերի ժողովածու, Երևան:
 ՍԽՄՍ—Ս. Խանզադյան, Մխիթար Սպարապետ, Երևան, 1961:
 ՍԶԲ—Ստեփան Ջորյան, Հայոց բերդը, Երևան, 1959:
 ՎԱԼԿ—Վ. Անանյան, Լեռնային կածաններով, Երևան, 1956:
 ԴՍ—Դաֆֆի, Սամվել, Երևան, 1961:

А. А. Папоян

ПРИДАТОЧНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ УСЛОВИЯ
С ПРОПУЩЕННЫМ СОЮЗОМ

Р е з ю м е

В статье затрагиваются некоторые наименее изученные вопросы современного армянского синтаксиса, в особенности проблема так называемой бессоюзной связи в сложно-подчиненных предложениях.

Автор впервые пытается отличить две различные противоположные формы связи придаточных и главных предложений: эллиптическая связь с пропущенным союзом и бессоюзная. До сих пор в арменоведении эти две формы связи определенно не отличались друг от друга, считались однозначными и рассматривались под одной общей рубрикой бессоюзных предложений. Причем, эллиптическую связь с пропущенным союзом автор считает такой связью, где потенциально существует внутренняя возможность восстановления союза. Между тем, в бессоюзных предложениях такой возможности нет. Здесь связь выражают другие грамматические средства, где сравнительно большую роль играют относительные местоимения.

Приведенные в статье многочисленные языковые факты показывают, что союзные и лишенные союза (бессоюзные и с пропущенным союзом) предложения представляют два противоположных и параллельно существующих вида синтаксической связи, которые сосуществуют и живучи в современном армянском языке. Далее изучаются разнообразные способы и формы синтаксических связей с пропущенным союзом в придаточных предложениях, выражающих отношение условия.

Такая связь в основном реализуется применением определенных форм времени—наклонения глаголов—сказуемых главного и придаточного предложения, порядком составных частей сложных предложений, употреблением вводных слов, особой интонацией, и т. д.